# Հուշաթերթ քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամի համար

Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային միջոցների կիրառման:

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻՍ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից:

Հուշաթերթ-հրահանգը օժանդակ ռեսուրս է հանձնաժողովի անդամի կողմից գործառույթին համապատասխան ընտրողին որակյալ ծառայություն տրամադրելու համար:

- ✔ Ընտրողին ցուցո՛ւմ տվեք առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնել հատուկ ծրար և նրա մեջ զետեղել ծալված քվեաթերթիկը:

**Հիշե՛ք:**

Ընտրողը, ով իր ֆիզիկական վիճակի, մասնավորապես՝ վերին վերջույթների բացակայության պատճառով, չի կարողանում ինքնուրույն կատարել քվեարկության ընթացակարգերը, նրա փոխարեն, նրա ներկայությամբ լրացված քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ զետեղում է և հիմնական քվեատուփի մեջ տեղադրում նրա կողմից ընտրված անձը, որն օգնել էր լրացնել քվեաթերթիկը:



- ✔ Երբ կհամոզվեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, բացե՛ք քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տվե՛ք հատուկ ծրարը զետեղել քվեատուփի մեջ:
- ✔ Հատուկ ծրարի մեջ դրված քվեաթերթիկը քվեատուփի մեջ զետեղելուց հետո ընտրողին ցուցո՛ւմ տվեք լքել ընտրական տեղամասը: